Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՈՐՈՇՈՒՄ

2009 թվական N -----------Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սևաքարի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 13 հեկտար արոտավարերը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ պոչամբարի ընդարձակման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀՀ Սյունիքի մարզի Սևաքարի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**

ՀՀ Սյունիքի մարզի Սևաքարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օտարումը և օգտագործման իրավունքով տրամադրումը հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի և 27-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան թույլատրվում է հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա, օրենսգրքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով՝ դրանց նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:

Նշված համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 13 հեկտար արոտավարերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ հանքարդյունաբերական պոչամբարի ընդարձակման համար:

Նշված համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված սխեման ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հողային օրենսգրքի /մասնավորապես 6-րդ, 7-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 57-րդ և 64-րդ հոդվածների/ պահանջներին համապատասխան և ՀՀ կառավարության 2001 թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 30 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված կարգով:

Համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման քննարկվել է ՀՀ վարչապետի 13.08.2001թ. N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի օգտագործման ժամանակավոր սխեման քննարկվել է ՀՀ քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

Համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի վերաբերյալ առկա են համայնքի ավագանու որոշումը՝ (սխեմային հավանություն տալու մասին), մարզպետի համաձայնությունը (մարզային հանձնաժողովի եզրակացության հիման վրա) ՀՀ կառավարության 17.01.2001թ. N 30 որոշմամբ սահմանված իրավասու նախարարությունների և գերատեսչությունների համաձայնությունները՝ կնքված և ստորագրված:

**Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ** Վ. Տերտերյան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
.......................... ,,..........ի,,
N ..........Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ




Սահմանակից հողեր՝

Ա-Բ Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող անտառային ֆոնդի
Բ-Գ Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողեր
Գ-Դ Չափնիր գյուղական համայնքի
Դ-Ե Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողեր
Ե-Զ Խալաջի գյուղական համայնքի
Զ-Ա Եղեգի գյուղական համայնքի

✱ Ծանոթագրություն

① արդյունաբերության, ընդերքաօգտագործման.... 13 հա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 13.08.01 թ. N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի

Հանձնաժողովը 2007 թվականի հուլիսի 11-ի նիստում քննարկելով Սյունիքի մարզի Սևաքարի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, առաջարկում է այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ֆ. Եգորյան

անդամներ՝ Ս. Մկրտչյան

Ս. Ծաքարյան

Ա. Վարդանյան

Ա. Ասատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

377810, ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Նժդեհի 1, հեռ. ֆաքս 28-78-30, (0-85) 6-24-43

«06» փետրվարի 2008թ. N 12-249

Ձեր ________________ N ____

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական կոմիտեի
նախագահ Մ. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել Սյունիքի մարզի Սևաքար և Արծվանիկ համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները, որոնցով առաջարկվում էր համապատասխանաբար 13.0 և 102.0 հա տարբեր նպատակային նշանակության հողեր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական կեղտաջրերի վերջնամբարի /պոչամբար/ համար:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից նշված սխեմաները համաձայնեցվել են՝ նյութերին կցելով հատուկ կարծիք, ըստ որի առաջարկվող տարածքը արդեն գտնվում է պոչամբարի տակ:

Հիմք ընդունելով նշված հատուկ կարծիքը հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից կազմված նյութերը հետ են վերադարձվել:

Տեղյակ է պահվում Ձեզ, որ առաջարկվող տարածքների միայն 20%-ն է փաստացի իրացված, որի մասին նշված է նյութերին կից բացատրագրերում:

Ելնելով խնդրի կարևորությունից խնդրվում է Ձեզ, կրկին անգամ քննարկել մեր կողմից ներկայացված առաջարկությունները և տալ համապատասխան կարծիք:

Ս. Խաչատրյան

կատ.
Մ. Կոստանդյան
հեռ./0285/65206

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

377810, ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Նժդեհի 1, հեռ. ֆաքս 28-78-30, (0-85 ) 6-24-43

«02» մայիսի 2007թ. N 11-909

Ձեր ______ N ____

Հողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման
միջգերատեսչական հանձնաժողովի
նախագահ պր-ն Վ. Տերտերյանին

Հարգելի պարոն **Տերտերյան**

ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով Ձեզ է ներկայացվում Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման (կցվում է), որով առաջարկվում է համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 13.0 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական պոչամբարի ընդլայնման համար:

**Ս. Խաչատրյան**

Կատ.
Ս. Կոստանդյան
հեռ.(0285) 65206

**Արձանագրություն**
**Սյունիքի մարզի համայնքների վարչական տարածքների և նրանցից դուրս գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մարզային հանձնաժողովի 2007թ. ապրիլի 25-ի N 3 նիստի**

**Լսեցին-** I. Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման քննարկելու մասին.
/Զեկ. Մ. Կոստանդյան /

**հանձնաժողովը որոշում է.**
Հավանություն տալ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային, ըստ որի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերից նախատեսվում է 13.0 հեկտար արոտավայր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական կեղտաջրերի վերջնամբարի /պոչամբար/ համար.

**Լսեցին-** II. Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման քննարկելու մասին.
/Զեկ. Մ. Կոստանդյան /

**հանձնաժողովը որոշում է.**
Հավանություն տալ Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային, ըստ որի համայնքի վարչական տարածքում գտնվող հողերից նախատեսվում է 102.0 հեկտար փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական կեղտաջրերի վերջնամբարի /պոչամբար/ համար՝ այդ թվում.
ա/ մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 38.4 հեկտար վարելահող.
բ/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 13.5 հեկտար վարելահող, 18.4 հեկտար արոտավայր, 2.5 հեկտար այլ հողատեսք.
գ/ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 29.2 հա թփուտներ:

**Ս. Խաչատրյան** — հանձնաժողովի նախագահ, Սյունիքի մարզպետ

հանձնաժողովի անդամներ՝

**Մ. Կոստանդյան** — մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագáñÏÙ³Ý բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

**Ք. Խաչատրյան** — մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

**Ա. Ուստաբաշյան** — մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

**Լ.Պետրոսյան** — ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի հանրապետական բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բնապահպանական բաժնի պետ /համաձայնությամբ/

**Ա. Գրիգորյան** — ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ՋՌԿԳ-ի հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ /համաձայնությամբ/

**Լ. Ներսիսյան** — ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

**Վ. Ծատրյան** — ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Սյունիքի և Վայոց Ձորի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

**Հ. Համբարձումյան** — ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կապանի ստորաբաժանման ղեկավար /համաձայնությամբ/

# Ք ա ղ վ ա ծ ք

ՀՀ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի ավագանու
23.04.2007 թվականի նիստի արձանագրությունից

**Լսեցին.- ՀՀ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին.**

/ Զեկ. Ա. Հակոբյան/

**Համայնքի ավագանին որոշում է.**

**Որոշեցին.-**1. Հավանություն տալ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը /կցվում է/, ըստ որի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից նախատեսվում է 13.0 հեկտար արոտավայր՝ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական պոչամբարի համար:

2. Խնդրել ՀՀ Սյունիքի մարզպետին՝ Սևաքար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման ներկայացնելու ՀՀ կառավարության հաստատմանը:

Համայնքի ղեկավար Ա. Հակոբյան

իսկականի հետ ճիշտ է

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**ՀՀ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի կազմման մասին**

Կազմված սխեմայում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի շարքը դասվող հողերը նշվել են նշանով՝ կարմիր շրջագծով:

Կազմված սխեմայով նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից 13.0 հեկտար արոտավայր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ որը նախատեսվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արդյունաբերական կեղտաջրերի վերջնամբարի համար:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1973թ. ապրիլի 18-ի N203 որոշման 21-րդ կետին համաձայն Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատին արտադրական կեղտաջրերի վերջնամբարի /պոչամբար/ կառուցման և սպասարկման համար նախատեսվել 395 հա հողամաս: Պոչամբարը կառուցվել և շահագործվում է 1977թ-ից:
Նախատեսված հողամասը տեղանքում սահմանազատված չլինելու պատճառով կադաստրային քարտեզագրման ժամանակ քարտեզագրվել է միայն պոչամբարի իրացված տարածքը /273.3 հեկտար/, որը և ներառվել է համապատասխան համայնքների հողային հաշվեկշիռներում /Արծվանիկ՝ 221.8հա, Սյունիք՝51.5 հա/:

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին–մարզային հողային պետական տեսչության պետ — Մ. Կոստանդյան